ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/05

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Ակվամարին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Խ. Խաչատրյանի (Լիազորագիր՝ տրված 18.01.2019թ.)

Քննելով «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից 18.01.2019թ. ներկայացված և 18.01.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/05 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Ակվամարին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ակվամարին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 18.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 14-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը փաստել է, որ «Ընդունել ի գիտություն, որ 09.11.2019թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Ակվամարին» ՍՊԸ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 86 000 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:»:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի 44-րդ կետը (Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից), մերժել է «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը:

Հանձնաժողովն արձանագրության մեջ նշել է, որ ««Ակվամարին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 86000 ՀՀ դրամի չափով:

Ընկերության կողմից տվյալ պահին վճարված չի եղել դրոշմանիշային վճարի գումարը: Ընկերությունը խնդրին տեղեկանալուց անմիջապես հետո վճարել է գումարը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Ակվամարին» ՍՊԸ-ն չգիտեր և չէր կարող իմանալ, որ դրոշմանիշային վճարը կարող է գնումների գործընթացում խնդիրներ առաջացնել, քանի որ Ընկերությունը հայտ ներկայացնելու օրը Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի տվյալներում ստուգել է հարկային մարմնի կողմից վերահոսկվող եկամուտների գծով պարտավորությունները և հայտնաբերել է, որ ժամկետանց պարտավորություններ չունի: Համակարգում որպես ժամկետանց պարտավորություն, դրոշմանիշային վճարն ընդհանրապես որևէ կերպ արտացոլված չի եղել: Ընկերությունն այլ կերպ, քան Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի տվյալներով ժամկետանց պարտավորություն ստուգելը, չէր կարող իմանալ ժամկետանց հարկային պարտավորության մասին:

Ի դեպ, Ընկերության կողմից դրոշմանիշային վճարը չվճարելը պայմանավորված է եղել հենց չիմացության հանգամանքով, քանի որ Ընկերությունը մշտապես և բարեխղճորեն կատարել է ՀՀ պետական բյուջեի հանդեպ ունեցած պարտավորությունները:

Ընկերությունը ՀՀ օրենսդրությունն ուսումնասիրելիս ևս չէր կարող հանգել այն եզրահանգման որ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չի հանդիսանում, քանի որ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թ. հուլիսի 19-ի N 228-Ն հրամանի տրամաբանությունից պարզ է դառնում, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներն են՝

1. ԱԱՀ-ն
2. Շահութահարկը
3. Եկամտային հարկը

4. Ակցիզային հարկը
5. Շրջանառության հարկը
6. Արտոնագրային հարկը
7. Բնապահպանական հարկը
8. Ոչ ռեզիդենտի շահութահարկը
9. Սոցիալական վճարը
10. Պետական տուրքը
11. Բնօգտագործման վճարը
12. Այլ հարկային եկամուտները:

Ըստ հրամանի՝ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չի հանդիսանում: Այն չի հանդիսանում նաև այլ հարկային եկամուտ, քանի որ համաձայն հարկային օրենսգրքի 1-ին հոդվածի՝ հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի (այսուհետ՝ հարկեր) և Օրենսգրքով նախատեսված վճարների (այսուհետ՝ վճարներ) հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ), սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները:

Դրոշմանիշային վճարի որևէ կարգավորում հարկային օրենսգրքում առկա չէ, այն որպես հարկի կամ վճարի տեսակ սահմանված չէ նաև ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով:

Ոչ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով, ոչ հարկային օրենսգրքով, ոչ էլ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված չէ, որ դրոշմանիշային վճարների նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունը վերապահված է հարկային մարմնին:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Անվավեր ճանաչել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել հանձնաժողովին «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները:

«Ակվամարին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.01.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար հայտարարվել է «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 19.12.2018թ. հայտ է ներկայացրել «Ակվամարին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ակվամարին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 29-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետի հիման վրա 09.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ակվամարին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 86 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից 18.01.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար հայտարարվել է «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 19.12.2018թ. հայտ է ներկայացրել «Ակվամարին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ակվամարին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից 29-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 09.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ակվամարին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 86 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 19.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 19.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

«Ակվամարին» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.01.2019թ. տրված թիվ 10 տեղեկանքը, համաձայն որի 19.12.2018թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 86 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 19.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 19.12.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից 18.01.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից կայացված՝ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ՔՀՄ-ԳՀԱՊՁԲ-ՍՆՈՒՆԴ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ